

ՕԾՎԵՑ

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԱՔՈՐԻ ԳՅՈՒՂԻ ՍԲ. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱԳԱԹԻ ԽԱՉԸ

Հուլիսի 12-ին Աքորի գյուղում մեծ հանդիսությամբ օծվեց Սբ. Գևորգ (XIII դ.) եկեղեցու գագաթի խաչը: Օծման սրբազան արարողությունը կատարվեց հանդիսապետությամբ և ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի և Ալավերդու տարածաշրջանի հոգևոր հայրերի մասնակցությամբ: Սրբազան արարողությանը ներկա էին Սբ. Գևորգ եկեղեցու բարերար ԱԺ պատգամավոր Կարեն Սարիբեկյանը, Ալավերդի քաղաքի և համայնքային իշխանությունների ներկայացուցիչներն և գյուղի ազգաբնակչությունը:

Համաձայն Հայաստանյայց Առաքելական սուրբ Եկեղեցու և մեր հոգեշնորհ վարդապետների կանոնակարգած արարողության՝ ըստ պատշաճի նախ լվացվեց խաչը ջրով և գինով, և ապա սրբազան առաջնորդի ձեռքով օծվեց սուրբ մյուռոնով:

Սրբազան Հայրն իր քարոզում հավուր պատշաճի և հանգամանալից մեկնաբանեց խաչի խորհուրդը և մեզ՝ հայերիս համար նրա պաշտամունքի առարկա լինելու հանգամանքը: Սրբազանն իր գոհունակությունն ու գնահատանքը հայտնեց ԱԺ պատգամավոր Կարեն Սարիբեկյանին նրա կատարած բարեգործությունների՝ հատկապես Սբ. Գևորգ եկեղեցու վերականգնման ազգանվեր աշխատանքի համար: Սեպուհ Սրբազանը իր ուրախությունը կիսեց գյուղացիների հետ և հայտնեց, որ ի վերջո աքորցիների համար մոտ օրերին կվերածովի տարիներ ի վեր չգործող աղոթատեղին, ուստիև բարեպաշտ ժողովուրդը հնարավորություն կունենա իր աղոթքը բարձրացնել առ Աստված այս պատմական և հնամենի եկեղեցում: Սրբազանը հուսադրեց ներկաներին, որ այլևս չեն խարխափի օտարածին և օտարամուտ այլադավանների ճիրաններում և հորդորեց հատկապես երիտասարդությանը, որ քրիստոնեական արժեքներով կենցաղավարեն և հավատարիմ մնան մեր ազգային արժեքներին ու ինքնությանը:

Գուգարաց թեմի մամլո դիվան